

ԼԷ.) անոնց մասին տուած հակիրճ տեղեկութեան շատ լաւ կը համաձայնի ֆիւլոնի ընդարձակ նկարագրերը: Եւ որովհետեւ սա կը ծանուցանէ թէ անոնց վերաբերեալ հին արեւոյ շարագրածէն կամ պատմութենէն քաղած է էական բաները. ուստի ես կարծեմ թէ ճշմարտութեան հակառակ խորհած չենք ըլլար, եթէ ըսենք, թէ այդ շարագրածն էր կորուսեալ ցեղերու պատմութիւնը, ուսկէ օգտուեցաւ նաեւ Զոսի-

մոս: Ապագայ վերայայտնութիւնն երբայական բնագրին ուշ կամ շուտ պիտի պարզէ ամէն բան:

Արդէն ըստ բաւականի գրած եւ վիճած են քննադատող զոսիմոսեան Զրուցի վրայ. սակայն ես ապահով եմ, որ հայերէն խումբագրութեան հրատարակութիւնը՝ վերստին գրել եւ վիճել պիտի տայ անոնց:

Հ. Բ. ՍԱՐԳՍԵԱՆ

ԼԵԶՈՒ ՍՈՒՏ ԶԱՐԴ ԱՆԻՐԱՒՈՒԹԵԱՆ

Այլ որ հայել իջեցեք սի՛րտ ապտում՝
Յարեազանգ աղիս քո տան հայրենի,
Վրէժ քեզ կարգան ամայացեալ զերդաստանը,
Պարկեշտ կուսանը, հարսունը, փեսայը, որբը, տղան,
Վրէժ քեզ անհաշտ օգառանին լեռնականը,
Վրէժ աբխազած անարօր դաշտը հայրենիք...

Երեւակայեցէք երբ մարդ ուրախ սրտով եւ անհոգ՝ կանաչ մարգագետնի մէջ շրջագայած ժամանակ, յանկարծ դալարներու միջէն բարձրացող խի՛ր գլուխը տեսնայ, ինչ զայրոյթը կը մղէ զինք մի գաւազանի հարուածով՝ գազտնասող թշնամիին վրէժն լուծել: Նոյն ազդեցութիւնն ներգործեց, «Տաճար»-ի հրատարակած «Հայ յեղափոխ. կուսակցութիւններ» զրբին ընթերցումն:

Հայի բիւրաւոր տառապանքներէն ետեւ, յուսոյ եւ մխիթարութեան կանաչ յոյսն պարզուեր էր մեր աչքի առաջ եւ մենք կը զուարճանայինք մտքով ման գալով այն սարերն ու ձորերն, այն երկար ճանապարհներն ու անապատներն, ուր տանջուեցան եւ ինկան մեր ամեն տարիքի եւ հասակի նահատակներն: Բոլորն մեզի կենդանացած կը թուէին իրենց բոսորագեղ արեան մէջ, բոլորն մեզի անուշարոյր անթառամ ծաղիկներ էին:

Մեզի համար անշունչ արարածներն անգամ լեզու ելեր էին:

Մենք անձկանօք կ'երեւակայէինք մեր

հայրենիքի վերաշինութիւնն միաշունչ, միախորհուրդ, համերաշխ գործակցութեամբ. մենք համոզուած էինք թէ Հայ ազգն 1915ի բովէն զտուած մաքուր ծոյլ դուրս եկել էր. բայց շատ խարուած էինք. «Տաճար»-ի հրատարակութիւնն այդ սփոփիչ մարգագետնի մէջ սողացող իժն երեցաւ, որ ծնունդ էր թուրք օձերուն:

Թուրքն գիտակից իր գործած քստմեկի ոճիրներուն, ապագայ դատաստանի երկրագէտ, ըստ ընածին բարուց, առտ զըրպարտութիւններով, հանդէս եկեր է հայ յեղափոխական կուսակցութիւններու կամ թէ Հայ ազգի վզին փաթթելու բոլոր ոճիրներու պատասխանատուութիւնն:

Մենք չենք զարմանար թուրքի պաճարամիտ մտայնութեան վրայ, այլ կը ցախնք մեծապէս «Տաճար»-ի անիմաստ նախանձայնութեանը համար, որ դեռ 1915ի Հայրենիքի մեծ աղէտներուց յետոյ, ստոր կուսակցական կրքերով լցուած, ոճրագործ, հրէշ խտրիհատականներու դատը ելեր է պաշտպանելու. մարդասպան վոհմակին հայ արիւնով ժանգոտած սուրը դեռ կը փորձէ սրբել եւ սրել ի վնաս հայկական դատին: Եթէ այդ թարգմանութեամբ՝ իբրեւ փաստաթուղթ թուրքի մտայնութեան, ուզած է հասկնալ ընել տալ հայ հասա-

բակութեան, այն ատեն թող իւր անձնական վրէժն ու մաղձն չթափէր անխորհրդայ մտաւորականներու և Հայ յեղափոխական կուսակցութիւններու գլխուն, որոնք ուրիշ նպատակ չունէին բայց եթէ պաշտպանել տանջուած, ստրկացած Հայի կեանքն, Հայի գոյքն, Հայի պատին, Հայի վառարանի սրբութիւնն: Արդարութիւն կը պահանջէին բռնաւորէն: Որով թարգմանչի լուտանքներն՝ ուղղուած են բովանդակ Հայ ազգի դէմ, այն՝ ինչ որ է թուրք հեղինակի նպատակն: Անհատական յանցանքներ, իրաւունք չեն տար դարապօր տեւու դարերով Հայ ազգի կրած Մարտիրոսութիւնը: Ինչ որ ալ լինի, հրատարակելը թող ճշմարտութեան հայելին նայէ, պիտի տեսնայ որ իւր իսկ երեսներն թուրքի պիղծ մրով սևացեր են:

* *

Ինչ զարտուղամտութիւն է թարգմանչինք որ պինդ ու պարզ, առանց կարմրելու, շիտակ կը գրէ թէ՛ թուրքն է «խեղճ ազգ» անմեղ գառնուկներ, որոնք կը յօշոտուին յափշտակող գայլերէ, Հայ յեղ. կուսակցութիւններէ ամբողջ Հայ ազգին համախոհ գործակցութեամբ:

Իտտինհատականները «բարեացակամ և հայրենասմ տէրութիւն» — իսկ Հայ ազգը, ապերախտ դէպ ի իրենց բարերարները. դաւաճան դէպի իրենց հայրախնամ տէրութիւն: Այսքան լրբութիւն հակառակ խղճի ձայնին, հակառակ ընդհանուր աշխարհի նպաստաւոր վկայութեանց, ական ջայտնի պաշտպանութեան, յորս փաստաթղթերով ապացուցին թուրքի գազանու թիւններն և նահատակ ժողովրդեան կրած սոսկալի տանջանքերն, ինչպէս չստակաց այդ գրիչն բիւրաւոր մայրերու անէծքէն, որոնք երկար ամիսներ և տարիներ շրջեցան լեշկ և մաշկ եղած, կարօտած, նեղուած, չարչարուած, հիւժած, երբ իրենց գրկաց մէջ աննկարագրելի կսկիծներով թալկացած որդիքներու աչքերն փակելով, դէպ յախտենականութիւն կը զրկէին անդառնալի:

«Տաճարի» յառաջարանը և վերջաբան գրողն, Չանգակներու, Մըլլիւնիկներու հետ՝ շուտով պիտի նետուի մոռացութեան կոյուղին, արժանի դամբանը ազգատեսց, ազգադաւ, եղբայրները և քոյրերը յօշոտող ճիւղներուն»:

«Քար մ'ալ ետեւն»:

Ան քար մ'ալ, մեր կողմէն, սև սրտին:

* *

Հայ յեղափոխական կուսակցութիւններն ունեցան, այո՛, իրենց թերութիւնները. բայց անոնց վերջի կատարած գործի մեծութիւնն այնպիսի լուսով մը կը փայլի այսօր, որ անշմարելի կը դարձնէ սև բծերը: Քննադատուած հայ յեղափոխականը, որիշ ազատագրուած մեծ ու փոքր ազգերու պատմութեան շաւղով հարկաւորարար կտրեց անցաւ, ազգային ազատութիւնը ձեռք բերելու համար. միայն այս տարբերութեամբ որ երոպայի ազգերու ազատագրութիւնն այնքան զօրաւորածին և արիւնոտ չեղաւ ինչպէս Հայ ազգինը: Այդ մարդ-գազաններէն պաշտպանուելու համար, Հայն ստիպուած էր բռնուցք և ոռմբ գործածել հասկանալի լինելու համար. (սոսկալի եղաւ նաեւ վրէժխնդրութիւնն, ազգադաւ մատնիչներու համար, ընդ որս գուցէ և «յիշեալ գրիչն»): Եթէ հայ կամաւորներն — կամ յեղափոխական անունով մկրտուածներն — պատրաստած չլլալին Հայ ժողովուրդն ինքնապաշտպանութեան, այսօր Տաճկին հպատակ մեր հազարաւոր եղբայրներն, պիտի կարենայինք գրկել, որոնք չորս տարի սահրելու վրայ, ամառ, ձմեռ հաւասարապէս դաշտի վրայ շահատակող Հայ մարտիկներուն հետ կոտեցան թուրք մարտի և խուժանի դէմ:

Յեղափոխականներն ո՞ւմ ծնունդն են, եթէ ոչ նոյն ինքն թուրքի բռնութեան: Միայն կամաւ կուրացած և կարկամած «Տաճարական»ները չեն ուզեր հասկանալ հայ ազգի կրած ցաւերն: Դեռ երբ Հայ յեղափոխական կուսակցութիւններն

գոյութիւն չունէին « Թուրքի հայրախնամ տէրութիւնն » Հայաստանը արիւնով լուաց 1828-30, 1852-54 և 1877-78 պատերազմներու ժամանակ. որովհետև Հայերն բնականաբար կ'ուզէին Թուրքի բռնութենէն ազատիլ, և համակրութիւն ցոյց կուտային առ քրիստոնեայ Ռուս բանակն, որ կուգար զիրենց ազատելու. այն ժամանակ այդպէս համոզուած էին արեւելեան քրիստոնեայք: Ուստի երեակայելու է թէ Բնջ պիտի ըլլար այս պատերազմի ժամանակ, երբ արդէն գիտիկներ որ Գերման-Թուրք համաձայնութիւնը որոշեր էր բռնի տարագրել Հայերն իրենց հայրենի երկրէն, պարզ քաղաքական և տնտեսական շահերու համար, և ոչ թէ ըմբոստութեան և ապստամբութեան համար: Եթէ հայ ժողովուրդն անգիտակից մնացած լինէր, ինչպէս էին յիշածս տարէթուերին, այսօր մի Հայ չէր մնար աշխարհի երեսին:

Եթէ հայրենիքի զաւակներն, կամաւոր խմբերն ժամանակին չկազմուէին, չմարզուէին, եթէ ունեցած չըլլայինք Տամատներ, Արապոսեր, Սերոր փաշաներ, Գուրգէններ, Գեղովներ, Մուրատներ ևն, ևն, անոնց պարագլուխ անյաղժ Անդրանիկն, միթէ մենք հինգ հարիւր տարուան գերութենէն և սարկացումէն յետոյ, պիտի կարենայինք այսօր ազգային հպարտութեամբ ողջունել Այրարատեան դաշտին վրայ հայկական ազատութեան և անկախութեան եռագունեան դրօշի ծածանումն: Ոչ քնաւ. պէտք է խոստովանիլ այսօր իսկ ճշմարտութեամբ: Յիշենք որ տարիով առաջ Հայկական պատուիրակութեան Գահերէց վսեմ Պ. Նուպար իշխանն, արդէն գնահատե՞ր էր հայ կամաւորներու գործը մեր դատին համար համառօտիւ այսպէս. « Կամաւորները միայն կարող են ուժեղացնել մեր դատը ու տալ մեզ իրաւունք լսելի անելու մեր ծայրն, երբ ժամը կը հասնի ձեռնկերպելու մեր ԱՐԴԱՐ և համեստ պահանջները » ևայլն. և կը յաւելցնենք ուրախութեամբ որ այդ ժամն հասած է:

Հայ կամաւորներու թափած արիւնն և արժանիքն, իջուց գետին արդարադատու-

թեան կշիռքի թաթն, մինչ միւս կողմինը Թուրքինն, թաւ յօսք ցնդեցաւ:

Այսպիսի և այսպիսի հեղինակաւոր ծայն մը, Հայկական Պատուիրակութեան Նեւտորի դատաստանը, անարգանաց սինին կը գամէ ընդ միշտ Հայ կամաւորներու դէմ զինուած չարարան և զրպարտիչ լեզուները: Ազգիս թէ ինկած և թէ կենդանի զիցազուններու զլխու շուրջն փառքի լուսաշող պսակ մը կը բոլորէ վերջնական յաղթանակն, զոր ի մօտուստ պիտի տօնէ Հայ ժողովուրդն: Այսօր Մայրն Հայաստան, իւր ցոյրաթիւ երկիրներու, Եւրոպայի և Ամերիկայի քաղաքակրթեալ ազգերու վանեղից տաճարի մէջ, իրաւացի հպարտութեամբ կը մուծանէ ազամանդեայ կարծրութեամբ և փայլով իւր զաւակներն: ՀԱՅ ԱԶԳԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՆ:

ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐՈՒ ԵՒ ԱԶՍԱՄԲ ԳՆԻՒՆ
ՓԱՌԱՌՈՐՈՒԹԻՒՆԸ

Հինգերորդ դարու Վահան Մամիկոնեանի հրաշացուցիչ տեսարանը այսօր մեզի կը ներկայանայ Պարիսու մէջ: Հոն կը դիմէ ժամանակակից նոր Վահանն, յեղափոխական կուսակցութեան անդրանիկ զաւակն և Հայ կամաւորներու զօրավար ԱՆԴՐԱՆԻԿՆ, իւրանման քաջ և կորովի ՌԻՏԱՊԱՋ ԸՆԿԵՐՆԵՐՈՎ, ցուցադրելու խաղաղութեան վեհաժողովին իրենց սրբած թուրն և փառաւոր սպիներն, անաղարտ փառքի շքանշանները, որոնք ընկալան Հայրենիքի պաշտպանութեան համար, անհամեմատ թանկագին քան զոսկեղէն և արծաթեղէն նշաններն, որ կը շողան անոնց հուժկու կուրծքերուն վրայ:

Նոյն միութարական տեսարանի շարունակութիւնն է: Ապստամբ, անհաւատարիմ Վահանն ընդդէմ Պարսից « հայրախնամ և բարբարոս տէրութեանն », թագաւորի ատենի մէջ կը փառաւորուի, և նորա « գործած ոճիրներն » ամենէն իմաստութեան գործ կը հռչակուին, և արժանաւայել ամեն մարդու որ զիտակցութիւն, ինքնաճանաչութիւն ունի իւր արժանապատու-

ուժեանք, իւր ազգի իրաւանց, անոր ազատութեան և իրաւունքի հաւասարութեան:

Թուրքի «հայրախնամ և բարերար» կառավարութեան պատգամաւորներն. Արդարագատութեան աստեղին մէջ, որուն դիմեր էին իրենք թուրքերն, Դամաստ Ֆէրիտ փաշան լսեց միայն Հայոց զազանային ջարդերու պատասխանատուութեան սոսկալի վճիռը: Պ. Լօտիի «գառնուկ ժողովուրդն» իրեն ինքնապաշտպանութեան համար, միայն Հայոց ջարդերու մէջ ցոյց տուաւ իւր «օրինակելի» մոլեռանդութիւնը: Այսպէս քաղաքականացեալ աշխարհի առջև, Արիսպազուի Նախագահ Էլէմանսոյի բերնով խաչատուրուած, ամօթապարտ և կորակորարձակուեցան «հայրախնամ տէրութեան» ընտրեալներն: Իսկ ասոր հակառակ, Հայ ժողովուրդի ներկայացուցիչներ, զանազան խաւերու պարագլուխներն, որպիսի համակրութեան արժանացան Դաշնակիցներն: Ինչն իսկական է յիշել միայն Հանրապետութեան խորհրդարանի Նագահ և Դորպատուիրակութեան անդամ Տիար Աւարիս Ահարունեանի ներկայութիւնն Արդարագատութեան աստեղի առջև, որքան զարմանքով և հիացմունքով լսեցին ապրտամբ ժողովրդեան քաջագործութիւնն, հայրենասիրութիւնն, արդարութեան և իրաւունքի համար կրած մարտիրոսութիւններն: Ո՛ր հայի սիրտն չի բարխսեց իրաւացի նպարտութեամբ, երբ հայկ. Պատուիրակութեան Նախագահն, ապստամբներու պետն Անդրանիկ զօրավարն ներկայացուց Ֆաղդուր Հանրապետութեան Նախագահ Պրահակարէէին՝ դուռտանելով նոր սիրալի գործերն, քաջութիւնն և անբասիր հաւատարմութիւնն դաշնակից ազգերու դատին և մղած կռիւներուն հասարակաց թշնամեաց դէմ: Նախագահ Պրահակարէէի համակրական և քաջալերական արտայայտութիւնն, բարոյական հատուցումն է այնքան արժանաւորութեանց և արդեանց՝ վերաստանալու հայրենի ժառանգութիւնն: Կեցցեն Հայ կամաւորներն, հայ պանծալի ապստամբ Գունդերն:

Միթէ մեր դահիճներն նուաճ զնահատեցին քան դաշնակից ազգերն՝ Հայ ազգին արդար պահանջներն: Ո՛չ թուրք պատուիրակութիւնն ինքնին հրապարակաւ վեհաժողովի առջև ճանաչեց և ընդունեց Հայ Հանրապետութեան զոյութիւնն, անկախութիւնն: Այս եղելութիւնն, «Տաճարականներու համար ալ, հանդիսապէս խոստովանութիւն մը չէ՞ Հայերու արդարութեան, և փոխադարձ հրապարակական խոստովանութիւն մը չէ՞ իրենց անիրաւութեան և գործած անհուն ոճիրներուն:

Այո՛ մենք, Հայ ազգը, զէնքի ուժով պաշտպանեցինք մեր հայրենիքը մեզի համար և խլեցինք մեր դարարու թշնամոյ և դաշնի ճիրաններուն: Հայաստան ալ ևս չի մեռնիր. իսկ օսմանեան կայսրութիւնն լոկ պատմական անուն մը պիտի մնայ, վասն զի իրեն սրով և հրով տիրած երկիրներու ազգերն՝ այսօր պիտի դառնան իրենց օրինաւոր ժառանգութեան տէր և իշխան:

Օսմանեան կայսրութիւնն այսօր կը լեցնէ այն գուրն՝ զոր Հայաստանի համար պեղած էր: Թուրք մոլեռանդութեան «Տաճար» ինկաւ կործանեցաւ: Անոր հղալկոյտի և բեկորներու վրայ այսօր կը վերականգնի Միճն Հայաստանի Ազատ Տէրութիւնն:

ՋԶԻՆԸ Ի ՆՈՐՄ ՓՈԹԵԼՈՎ

Առ Ձեզ են բանքս ո՛վ քաջք, ո՛վ անպարտելի ախոյաններ ազգային ազատութեան, ամեն դասակարգի և ամեն կուսակցութեան պատկանող պատկառելի, յարգելի և սիրելի Պետեր, Վարիչներ, Կոռոզներ. դուք այսօր ժողովեցիք ձեր ջրտինքով սերմանած և արիւնով ոռոգած հունձքերն. մեր ցանկալի Հայրենիքն իւր Ազատութիւնն կը գտնէ, դուք կը հասանիք ձեր նպատակն. որքան բարձր և ազնուական էր ձեր նպատակն, դուք ձեր իմաստութեամբ և քաջագործութեամբ արժանաւոր ցուցիք ինքզինքնիդ ձեր ստանձնած և ուխտած վեհ պարտականութիւններուն: Այսուհետեւ զանազան

գոյնեւորւ անունները տեղի պիտի տան միու-
թեան և միաբանութեան զաղափարին :
Բաւական չէ մէկ ազգի զաւակ լինել,
այլ հարկաւոր է մի միայն զաղափարի
ծառայել, Հայրենիքի մեծութեան և փառ-
քին՝ նուիրելով ամէն մին իւր հոգեկան,
բարոյական և մտաւորական ոյժերն : Խուժ,
դուժ, ծառայ, ազնուական, ամենեքեան դուք
մի էք այսուհետեւ Հայաստանի համար, հայ-
րենիքի միակ և օրինաւոր իշխանութեան
համար : Մեր դիպչազուններու, մեր մտա-
ւորական գործիչներու անուրանալի պար-
տականութիւնն է այսուհետեւ անձնանուի-
րաբար հետեւելու երկու բանի, հայրենիքի
արտաքին և ներքին քաղաքական և բա-
րոյական կազմակերպութեան գործին :

Աջակցիլ անխտրաբար Որինաւոր կա-
ռավարութեան՝ արտաքին աշխարհի հետ
ունեցած յարաբերութեանց մէջ, պաշտպա-
նելով և լուսաբանելով այն հարցերը, որոնք
ընդհանրապէս քաղաքական կը կոչուին, և
սերտ կապ ունին դիւանագիտական, տնտե-
սական, բնկերական գործառնութեանց հետ.
նոյնքան և աշխուրջ լինել ներքին բարե-
կարգութեան տնտեսական, բնկերական
մասին, եայլն եայլն, հրապարակական պայ-
քարներու մէջ, շօշափել ընդհանրութեան
շահերը, զանազան կարծիքներէ կազմել մի
խելացի ուղեցոյց, որով Աեղբոնական
վարչութիւնն գիտենայ ուղղելու կառա-
վարութեան ղեկն հայրենիքի փառքին և
երջանկութեան համար. օգնել ներքսա-
պէս ժողովրդի բարգաւաճման, իսկ սահ-
մանէն դուրս, գիտնալ յարգել տալ իւր հե-
ղինակութիւնն : Երբ գայ այն ցանկալի օրն
որ Հայ ժողովուրդն գիտակից իւր քաղա-
քացիական պարտուց, ազատ ընտրութեամբ
յդէ իւր ներկայացուցիչներն Հայկական
խորհրդարանն, այն օրէն՝ նովին իսկ գոր-
ծով կը դադրին կանխապէս գոյութեան
ունեցող յեղափոխական կուսակցութիւն-
ներն, եթէ հիմնովին չկազմեն նոր և
բարեփոխուած ծրագիրներ, ոչ թէ սարուկ
ժողովրդի մը համար, որուն քաջութեամբ
ծառայեցին, այլ ազատ ժողովրդեան մը
քաղաքական կազմութեան և վարչութեան

համար, համաձայն և համապատասխան
ընդհանրութեան շահերին : Միանգամ
ընդ միշտ Հայ ժողովուրդը, իւր ամեն
կազմակերպութիւններով, պէտք է ցոյց
տայ քաղաքականացեալ բարեկամ Ազգերու
և Պետութիւններու, թէ ինքն արժանի էր
ԱՅՏԱՏԻԹԵԱՆ, և թէ ինքն գիտէ սուրն ու
զրիչն, ըստ տեղւոյն գործածել : Այսու-
հետեւ վրէժի սուրն թող դառնայ իւր պա-
տենաւր, և միայն գործէ արդարադատու-
թեան սուրը, երկրի խաղաղութիւնն և
բարեկարգութիւնն պահպանելու համար.
« զի իշխանն ոչ են յերկիւղ բարեաց
գործոց, այլ շարեաց... զի ոչ եթէ վայ-
րապար ածեալ է սուսեր ընդ մէջ. (Հո-
գլ. Ժգ) . իսկ ընդհակառակն զրիչն, ըստ
Ազաթանգեղոսի, թող խաղայ թուշի ազատ
Հայաստանի առպարէզի վրայ, Հայ միտքը
պիտի ցոյց տայ որ ինքը կարող է ինքզինքը
կառավարել. հայ զրիչն պէտք է պնդէ
հարթէ և արօրադէ կորդացեալ և խո-
պանացեալ բազմաթիւ կարիքներ. նոր
ձախող բարդութեանց առաջն առնուլ և
դարմանել այն չարիքները, որոնք ան-
պիտան տիրապետող գզի թողած ժաշտ
սերներն են : Պէտք է ջնջել և անհետ ընել
այն անբնական և եկամուտ պակասու-
թիւններն և վերածնութեան համար առոյգ
և առողջ նոր հող պատրաստել : Ողջամիտ և
կենսունակ վարչութիւն մը, որ անխտրա-
բար կը յենու ազգի մասւորական և
բարոյական ոյժերու վրայ, կարող է խոր-
տակել յեղափոխական առանձնաշնորհմ-
ներ, կուսակցական հերձուածներ, տապա-
լել անմատոյց դեակներ :

Յիշենք մեր նախնեաց լաւութիւնները. և
ըստ Խորենացւոյն, Երուանդեան Տիրանի
կառավարութիւնը, Նոր Հայաստանն թող
իրեն օրինակ վերցնէ : Այդ մարդու մէջ
Միտքն և Գործն միացած «զազգս մեր բարձ-
րացոյց և զընդծով կացեալս լծադիրս և
հարկապահանջ կացոյց բազմաց... Խա-
ղաղութեան և շինութեան բերող, իւզով
և մեղու զհասակ ամենեցուն պարբեալ...
Արդարադատ և հաւասար կշիռս ու-
նելով յամենայնի. զամենայն ուրուք կեն-

ցաղ՝ ՄՏԱՅՆ ԼԵՒԿԱՅԻ ԿՇՈՒՐ. ոչ ընդ լաւագոյնան իւանդայր, և ոչ զնուաստն արհամարհէր, այլ ամենեցուն հասարակաց զխնամոցն իւրոց ի վերայ տարածել ըզգեստս »: (Խոր. ԻԳ.):

Տիգրան՝ քաջացն քաջ, ուրիշ շատ քաջիբու հետ ազատ Մասեաց սարի ծայրէն կը դիտեն Նոր Հայաստանի փառքը: Մեր ուխտն է վերջինս գերազանցէ քան զանաջինն:

Քաջաց արենէն թող յառնեն Նոր Տիգրաններ և վճռաշապուհներ, քաղաքական և մտաւորական Ոսկեդար պատրաստեն

Հայ մարտիրոս ժողովրդին: Դուք անբաղդ հայրենեաց, բաղդաւոր զաւակներ, համայնալինջ սրէն ազատածներ, չէք մեռնիր այն ժամանակ. երբ պատմութիւնն կարենայ գրել ձեզ համար ալ թէ՛ յաւուրսն յայնոսիկ երանելի և ցանկալիներ անպայման Հայաստան երկիր, աշխահայ Հայոց:

Հանճարն է մեզ կենք զես վառեցէք

Մեզ ու ազտիկ այդոր սիրով վառուեցէք.

Մերն է Ապագան,

Ազատն Հայաստան:

ՄՆՂՈՒ ՇԻՐԱԿԱՑ

Ժ Ա Գ Տ Ը Մ Ո Ռ Ի Կ Ա Ն

Հ Ա Ց Ժ Ո Ղ Ո Վ Ը Ր Գ Ն Պ Ա Տ Մ Ո Ռ Թ Ի Ի Ն Ը

ԿԵՕԹ-ՉԱՏ ԿԱՄ ՍԵՒԱՆ

ՍԵՒԱՆԻ՝ լիճը, Հին Աշխարհի ամենէն ընդարձակ և ամենէն գեղեցիկներէն մին, որուն կապտագոյն անոյշ ջուրերը միշտ շինջ են, կը տարածուի գրեթէ 70 քիլոմէր երկայնութեան մը վրայ, մինչ իր ամենէն աւելի մեծ լայնութիւնը 30.000 քայլ է: Կանաչ լեռներու բլուրակ մը զայն կը շրջապատէ, կը տիրէ 1000 մեղրէ աւելի բարձրութենէ անոր շրջապատին, կը սնուցանէ անգարաւոր գետակներ, որ կ'ոռոգեն անոր եզերքներուն վրայ շրջուած բազմաթիւ գիւղերը. իսկ Սեւանի գետգերեայ բնակիչները կ'ապրին իրենց մշակութեամբ և բիշ մ'ալ իրենց ձկնորսութեամբ, քանի որ Կէօք-Չայը շատ խոր է և ձկնեղով լեցուն. իր գեղեցիկ կարմրախայտերն համարեաւ են:

Ամառ ժամանակ՝ Սեւանի գիւղերը հեշտալի զովութիւն մ'ունին, բնութիւնը հոն ծիծաղկոտ է և առատաձեռն, բայց՝ հա-

զիւ թէ ցուրտերը կը խտանան, և ծառերուն տերեւները հիւսիսային քամիէն կը թափթփին, այդ ծովերու մակարդակէն 2000 մեղր բարձրութեան վրայ գետնը ուռած այգիները ձիւնի ստուար սաւանով մը կը ծածկուին, սառը անշարժութեան կը դատապարտէ այս քաղցրաշուր ծովուն ալիքները, և գեղջուկը իր գիւղէն դուրս ելլել չի յանդգնիր, հօտերը գետնափորի մէջ կը քաշուին, և ամէն մէկ տան շուրջ կը բարձրանան ձիւնին տակ՝ փայտի, չոր քակորի, յարդի դէզերը, որոնք կարեւոր են եղեմաբի եղանակն անցնելու համար: Մեռելութիւնն է որ կը տիրէ՝ տարուան չորս կամ հինգ ամիսներուն մէջ: Ամէն ինչ կ'անբերեալութեամբ՝ սպիտակ մեծ քուղին տակ, և գիւղին դիրքը կարելի չըլլար զանազանել եթէ ոչ այն թեթեւ ծուխերէն որ կարծես թէ երկրին սառած ընդերքէն դուրս կ'ելլեն:

Երբ Տիգրիսէն Երեւան երթալու ուղեգնացութիւնը՝ համբով կ'ըլլուէր, երբ բաղդը կ'ուզէր որ համբորդը՝ Չալուխուէն և Ելենովքայէն գալով, հասնէր Ախտա գիւղակը՝ արշալոյսին ծագելէն քանի մը վայր:

1. Հին ժամանակ՝ Պեղամի ծով կոչուած: